իշխանական գաւազան, մինչեւ նոյն իսկ առաջի Պատրիարքին Ցունաց. 'ի զայրանալ և 'ի թշնամանալ սորա, Սերվիացիք բոլոր կալան առ Պատրիարքն Կոստանդինուպոլսի և յայլ յաթոռս, նոցա յարուցեալ եկին յԵրուսաղէմ. եւ 'ի ժողովի մերժեցին զբռնութիւն Պատրիարքին Երուսաղէմի, և ետուն վճիռ չիշխել 'ի վերայ Սերվիացւոց, զի նոքա ունին Արք եպիսկոպոս յաշխարհն իւրեանց. նըմա անկէ հովուել զսոսա. եւ այսպէս որոշեցան Սերվիացիք 'ի Ցունաց 'ի ժամանակս Թէոփանէ Պատրիարքին, (1634)։ Սակայն Սերվիացիք կորուսեալ զառաջին ճոխութիւնս և զփառս, անկեալ էին 'ի ներքոյ պարտուց. մինչ զի խորհիլ վաճառել զամենայն ինչ, և գնալ այր իւրաքանչիւր յանդէպ երեսաց իւրոց. եւ մնացեալ էր կիսաւեր վանք Ս. Սարայ, եւ Ս. Միքայելի, մերձ 'ի վանս Լատինաց, զոր կամէին գնել նոքա. եւ Հայք եւս տիրել կամէին վանաց Ս. Սարայ, զոր Թողեալ էին յայնժամ Սերվիացիք։ Լուեալ զայս Թէոփանեայ զայրացաւ յոյժ և երդուաւ իսկ չթողուլ Հայոց և Լատինաց տիրել վանօրէից։ Զի Սերվիացիք առեալ էին պարտեօք 54,000 դահեկանս եւ զվանօրայս եդեալ 'ի գրաւի. կոչեալ զնոսա եւ նոցա զգումարն զայն, պատուիրեալ հատուցանել զպարտսն և ազատել զվանօրայս. յորոյ վերայ զայրացեալ Հայոց եւ Լատինաց, ազգ արարին Բդեշխի քաղաքին եւ մեծամեծաց. եւ նորա կոչեալ զՊատրիարքն Ցունաց խնդրէր 'ի նմանէ հատուցանել զպարտս Սերվիացւոց, զոր պարտ էին Տէրութեան. եւ կամ հանել 'ի վաճառ զերկոսին վանսն, առ 'ի վճարել զպարտս Տէրութեանն. և նա խնդրեաց 'ի նմանէ պայման ժամանակի, և եղեալ յԵրուսաղէմ գաղտ չոքաւ 'ի Պուղտան, այն է Օսմանիայ. և եկ առաջի Վասիլ Պէյի՝ եդեալ արասան 'ի պարանոց իւր, և 'ի հարցանել նորա զպատճառն, նա պատմեաց նմա զամենայն անցս Երուսաղէմի. եւ ետ նմա 6000 ոսկի վճարել զպարտս։ Եւ մինչդեռ դեգերէր նա անդ՝ եհաս առ Պէյն ոստիկան 'ի Թագաւորէն և խնդրէր 'ի նմանէ զՊատրիարքն, տանել 'ի Թագաւորեալ քաղաքն եւ դնել 'ի բանտի մինչեւ հատուցանել նմա զպարտսն. եւ Պէյն ետ նմա 6000 ոսկիս եւս եւ արձակեաց զոստիկանն. յարեան եւ այլ դրամա-